Ամենափոկիչ Զազը

Ջազի պատմությունը

- Արևմտաաֆրիկյան (սևամորթների) և արևմտաեվրոպական (սպիտակամորթների) 300-ամյա երաժշտական ավանդույթների միահյուսում ջազին բնորոշ է կատարողի հանպատրաստից ստեղծագործելը:19-րդ դարի վերջում-20-րդ դարի սկզբում աֆրիկյան և եվրոպական երաժշտական ոճերի սինթեզման արդյունքում առաջացավ երաժշտական արվեստի այս ձևը:Իր հատուկ ռիթմերով, հորինվածքային սկզբունքներով արտահայտեց սևամորթների հույզերն ու ազատության ձգտումը:

- Առաջին Համաշխարհային Պատերազմից հետո մարդիկ ուզում էին ինչ-որ նոր բան,որը վերջ կդներ ձանձրացնող սոցիալական սովորույթներին:Առաջին անգամ աֆրիկյան-ամերիկյան մշակույթը դարձավ «լավ վաճառվող ապրանք»,որը շատ բան արեց,որպեսզի բարձրացնի աֆրոամերիկացիների դիրքը հասարակության մեջ:Բայց դա տեղի չի ունեցել առանց որոշակի խմբերի դիմադրության.նրանք շարունակ և պարբերաբար դաժանորեն ճնշել են աֆրոամերիկացիների: Այնուամենայնիվ, ջազը ստացավ ճանաչում և ընդմիշտ փոխեց ամերիկյան երաժշտության հետագիծը:

- Հենց սկզբից էլ ջազը եղել է ազատության,շարժման և ինքնաարտահայտվելու միջոց:Նրա հանգիստ երաժշտական ավանդույթներն ու իմպրովիզացիայի վրա շեշտը վկայում են դրա մասին:Այն հրաշալի ֆոն եղավ մշակութային փոփոխություններում:Յուրաքանչյուր մայրցամաքում ջազ են նվագում սեփական զգացողություններով:

Ամերիկացիները վստահ են, որ աշխարհին տվել են սահմանադրություն, ջազ ու բեյսբոլ

- Գուցե այդպես էլ կա: Բայց, հավանաբար, առաջին տեղում պետք է ջազը դնել: Այն նույն ջազը, որն, ինչպես ասում են, փրկեց ԱՄՆ-ն Մեծ դեպրեսիայի տարիներին և մի քանի սերնդի ճակատագիր որոշեց, որոնք գեթ մեկ անգամ լսել են այդ անանման երաժշտությունը:

Կանայք կոտրեցին սեռական դերի մասին ավանդական մտածելակերպը՝խուսափելով պահպանողական հագուստից

- Կանայք սկսեցին մասնակել աշխատանքային պրոցեսին:Առաջին Համաշխարհային Պատերազմի ավարտից հետո կանայք ունեցան շատ ավելի մեծ հնարավորություններ.սոցիալական կյանքում մտցվեց զվարճանք:Հավասարության և ազատության մասին գաղափարները շատ գրավիչ էին ու շուտ տարածվեցին այդ ժամանակահատվածում:Կանայք,տրամաբանական է,օգտվեցին այս ժամանակահատվածից:

- Ջազի կառուցվածքը,որպես կանոն,շատ ավելի բարդ է,քան այլ երաժշտական ձևերի:
  Դժվար է գնահատել ջազը.բանիմաց ունկնդիրներ են գալիս այն վայելելու:

Ջազը ծնվել է Նոր Օռլեանում, որտեղից շոգենավերով հասել է Չիկագո ու Նյու Յորք

- Լայն տարածում ստացած լեգենդն ավանդում է, որ ջազը ծնվել է Նոր Օռլեանում, որտեղից հին շոգենավերով Միսիսիպիով հասել է Մեմֆիս,Սենտ Լուիս և վերջապես Չիկագո ու Նյու Յորք: Հին լեգենդը հավանաբար հեռու չէ իրականությունից:Ջազն իրոք ծնվել է Նոր Օռլեանում,նրա աղքատ թաղամասերում ու արվարձաններում,իսկ հետո տարածվել է ամբողջ երկրով մեկ:

- Տասնամյակներ շարունակ ջազը փորձել են արգելել, լռեցնել եւ անտեսել, նրա հետ փորձել են պայքարել, սակայն նրա ուժը երաժշտության մեջ ամենամեծն էր:

  Ամբողջ աշխարհում 1917 թվականը դարակազմիկ ու շրջադարձային եղավ. ռուսական կայսրությունում տեղի ունեցավ երկու հեղափոխություն,ԱՄՆ-ն երկրորդ անգամ վերընտրեց Վուդրո Վիլսոնին:Սակայն այս տարիներին տեղի է ունենում մի իրադարձություն, որը նույնպես հավերժ պետք է մտներ պատմության տարեգրության մեջ.Հունվարի 30-ին, 1917 թ.Նյու-Յորքի ստուդիաներից մեկում՝
- Victor ընկերությունում արձանագրվում է առաջին ջազային грампластинка-ն:

- Չնայած Նոր Օռլեանում ջազի ժողովրդականությանը՝մեծ թվով ջազմեններ,այնուամենայնիվ,գերադասեցին Չիկագոն,Նյու-Յորքը:Այս երկու քաղաքների աստղ է դառնում երիտասարդ շեփորահար,երգիչ Լուի Արմսթրոնգը,իրավահաջորդը՝Նյու Օռլեանի մեծագույն շեփորահար Քինգ Օլիվերը:1924 թվականին Չիկագո է ժամանում ևս մեկ քաղաքացի, դաշնակահար և երգիչ Ռոլլ Մորթոնը:Երիտասարդ երաժիշտը աչքի չի ընկնում համեստությամբ և համարձակորեն հայտարարում է բոլորին այն մասին,որ հենց նա է հանդիսանում ջազի արարիչը:

- 1913 թվականի փողոցային խուլիգանական արարքից հետո նրան ուղարկում են ուղղիչ դպրոց. իր մոր հաճախորդ ոստիկաններից մեկից նա գողացել էր նրա ատրճանակը և փողոցում կրակոցներ կազմակերպել: Չնայած բազմաթիվ դժվարությունների՝ նա դպրոցում կարողանում է երաժշտական դասեր առնել դպրոցի նվագախմբի դիրիժորի մոտ և սովորում է նվագել կորնետ և ալտզորն: Իսկ որոշ ժամանակ անց նա արդեն երգում էր այդ նույն նվագախմբում: 1914 թվականին, ավարտելով դպրոցը, տեղի սրճաաններում սկսում է նվագել սիրողական խմբերում: 17 տարեկանում նա ամուսնանում է մարմնավաճառ Դեյզի Փարկերի հետ: Սակայն ամուսնությունը երկար չի տևում: Քինգ Օլիվերի հետ պատահական հանդիպումը նրան հնարավորություն է տալիս սովորել նրա մոտ և երաժշտի՝ Չիկագո մեկնելուց հետո «Քիդ Օրի» խմբում զբաղեցնել նրա տեղը: Արմսթրոնգը միաժամանակ աշխատում էր մի քանի խմբերի հետ: Այս ժամանամիջոցում նա պրոֆեսիոնալ երաժիշտ է դառնում: 1922 թվականին Քինգ Օլիվերի հրավերով մեկնում է Չիկագո և աշխատում «Քրեոլ Ջազզ Բենդի» հետ: 1924 թվականի փետրվարին երաժիշտը կրկին ամուսնանում է, այս անգամ բենդի դաշնակահարուհի Լիլ Հարդինի հետ: Իսկ կես տարի անց նրանք տեղափոխվում են Նյու Յորք, որտեղ Լուին աշխատում է այլ խմբերի հետ: 1925- ին Լուի Արմսթրոնգն առաջին անգամ մտնում է ձայնագրման ստուդիա՝ որպես անհատ կատարող:

- Ինչպես մյուս սևամորթ երաժիշտները՝ Արմսթրոնգը չէր կարող անտարբեր մնալ ռասսիզմի հանդեպ: 1954 թվականին, երբ Արկանզասի նահանգում սևամորթներին արգելվեց սովորել սպիտակամորթների հետ նույն դպրոցում, Լուին, ի նշան բողոքի, հետաձգում է Ռուսաստանի իր հյուրախաղերը, սակայն նա չի կարողանում հրաժարվել ձայնագրման աշխատանքներից: Նույն թվականին նա նկարահանվում է ևս երկու ֆիլմում: 1959 թվականի հունիսին նա սրտի կաթված է ստանում, բայց, բավարարվելով հիվանդանոցնում շատ քիչ ժամանակ մնալով, նա շուտով վերադառնում է իր լարված աշխատանքին: 1971 թվականին նա ձայնագրում է իր վերջին՝ The night before Christmas երգը: Լուի Արմսթրոնգը մահացավ բարեպաշտ մարդու մահով՝ քնած ժամանակ նրա սիրտը կանգնեց: Դա 1971 թվականի հուլիսի 7-ն էր: Արմսթրոնգը ստեղծեց կատարելու իր սեփական ոճը՝ իր ազդեցությունը թողնելով առանց բացառության բոլոր ջազային երաժիշտների վրա: 50 տարի շարունակ նա ձայնագրում էր երգեր, որոնք հիթ էին դառնում և անգամ այսօր հնչում են ռադիոկայաններով և հեռուստատեսությամբ: Նկարահանվել է ավելի քան 30 ֆիլմում, տարվա ընթացքում մոտ 300 համերգներ էր տալիս՝ այցելելով աշխարհի ամենահեռավոր վայրերը: Նա գրում էր հոդվածներ, ինքնակենսագրություններ, հուշագրություններ: Ի վերջո Լուի Արմսթրոնգը 20-րդ դարի համաշխարհային աստղերից է: